Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **տեսալսողական մեդիածառայություն մատուցող** (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

2) **կարգավորող պետական մարմին՝** անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.

3) օպերատոր՝ ցանցային կամ մուլտիպլեքս օպերատոր, որն առաջարկում է հաղորդակցային ծառայություն (ցանցեր, տեսալսողական համակարգեր, սլոթ և այլն) և պատասխանատվություն է կրում տեխնիկական ենթակառուցվածքի շահագործման միջոցով տեսալսողական ազդանշան սպառողներին հասցնելու համար.

4) **մուլտիպլեքս օպերատոր՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը բացառապես ապահովում է մուլտիպլեքսի տարածման և ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը և օգտագործում է հաճախականային սահմանափակ ռեսուրսը.

5) **ցանցային օպերատոր՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

6) հանրային հեռարձակող՝ Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող Հեռարձակող.

7) **թեմատիկ ուղղվածություն՝** տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն ըստ բովանդակային առանձնահատկությունների.

8) **սպառող՝** առնվազն մեկ Հեռարձակողի տեղեկատվությունն ընդունող (դիտող և (կամ) լսող) անձ.

9) փոխկապակցված անձ՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր.

10) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր՝ ~~Հեռարձակողի~~ գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ~~պայմանագրի հիման~~ ձեռք բերված գրավոր համաձայնության հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

11) մ**ուլտիպլեքս**՝ տվյալների մի քանի հոսքերի միավորմամբ միասնական մեկ հոսքի (թվային ցանցի) ստացումը, որը հետագայում կրկին կարող է մասնատվել.

12) **հանրային մուլտիպլեքս՝** Հայաստանի Հանրապետությանը 100 տոկոս պատկանող ընկերության սեփականությունը հանդիսացող հեռարձակման թվային ցանց.

13) սլոթ՝ մուլտիպլեքսում թվային հոսքի մի մասը, որը բավարար է ոչ ավելի, քան մեկ ծրագիր հեռարձակելու համար.

14) սփռում՝ որոշակի տարածքի սահմաններում տեսալսողական տեղեկատվության տարածում.

15) տ**եսալսողական տեղեկատվություն՝** հաճախականություններով և հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց և այլն) սպառողներին տրամադրվող տեսալսողական նյութ, ներառյալ՝ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսություն).

16) **գծային տեսալսողական տեղեկատվություն՝** Հեռարձակողի կամ օպերատորի կողմից սպառողներին համաժամանակյա դիտելու և (կամ) լսելու նպատակով նախապես կարգավորված հաջորդականությամբ տրամադրվող տեսալսողական նյութ.

17) ոչ գծային տեսալսողական տեղեկատվություն՝ Հեռարձակողի կամ օպերատորի կողմից անհատ սպառողի պահանջով նրա ընտրած պահին դիտելու և (կամ) լսելու նպատակով տրամադրվող տեսալսողական նյութ՝ ըստ տեսացանկի (կատալոգի).

18) **տեսալսողական ծրագիր՝** Հեռարձակողի նախապես կարգավորած հաջորդականությամբ տեսալսողական նյութեր.

19) **տեսալսողական հաղորդում՝** տարածվող պատկերներ և (կամ) հնչյուններ պարունակող սահմանափակ տևողությամբ նյութ, որը կազմակերպական իմաստով ինքնուրույն և ավարտուն է և համարվում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքի օբյեկտ.

20) **առաջին ամրագրման հաղորդում՝** առաջին անգամ հեռարձակվող տեսալսողական հաղորդում.

21) **հայերեն տեսալսողական հաղորդում՝** հայերեն ընկալման որևէ միջոցով (կրկնօրինակման, հնչյունավորման և (կամ) ենթագրի) ուղեկցվող տեսալսողական հաղորդում.

22) **տեսալսողական գովազդ՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը շահույթ ստանալու նպատակով կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ.

23) **հեղինակազրկում՝** կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում.

24) **բացառիկ իրավունք՝** այլ անձանց մտավոր սեփականություն հանդիսացող տեսալսողական տեղեկատվությունը որոշակի աշխարհագրական տարածքում տարածելու բացառիկ իրավունք.

25) **կարևոր իրադարձություն՝** պետական կամ համազգային նշանակության քաղաքական, մշակութային, կրոնական, մարզական կամ դրանց իրենց նշանակությամբ համարժեք իրադարձություն.

26) **մշտադիտարկում՝** կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների և օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկում.

27) **վերահաղորդում՝** այլ Հեռարձակողի կամ ցանցային օպերատորի կողմից տեսալսողական ծրագրի համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչև դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետևանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված) տեսալսողական հաղորդման հետագա հեռարձակումը.

28) **էթիկայի կանոնագիր**՝ Հեռարձակողի կողմից միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթ սեփական էթիկական նորմերի վերաբերյալ.

29) **Տեսալսողական մեդիայի ինդուստրիալ կոմիտե** (այսուհետ՝ Կոմիտե)՝ կամավոր անդամության վրա հիմնված ինքնակարգավորվող ոչ առևտրային կազմակերպություն (ԻԿԿ), որի իրավունքները, պարտականությունները և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով և իր կանոնադրությամբ.

30) **տեսալսողական մեդիայի չափումներ** (այսուհետ՝ չափումներ)՝ էլեկտրոնային գրանցման համակարգի միջոցով՝ դիտաչափ (փիփլմետր) սարքավորումներով առանձին տեսալսողական հաղորդումների և տեսալսողական ծրագրերի վարկանիշերի բացահայտման կապակցությամբ իրականացվող գործունեություն:

Հոդված 9. Տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը

~~1. Արգելվում է տեսալսողական հաղորդումներում օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածելը: Ուղիղ եթերի ժամանակ նման կոչեր հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե կոչի հեղինակը ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:~~

~~2. Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում վարչական իրավախախտման կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններ:~~

~~3. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:~~

~~4. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդի և զվարճալի հաղորդումների հեռարձակումը Հեռարձակողների կողմից արգելվում է:~~

~~5. Հեռարձակողները կամ օպերատորները սույն հոդվածի 3-րդ մասում նշված հաղորդումներն առանց ժամային սահմանափակումների կարող են տարածել սպառողների կողմից այդ հաղորդումների հասանելիության արհեստական արգելքի (կոդի) ներդրման տեխնիկական հնարավորության առկայության դեպքում:~~

~~6. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց մասնակիցները Հեռարձակողին նախապես հայտնի՝ կենցաղային հողի վրա առաջացած վիճաբանության, երկարատև ժամանակահատվածի ընթացքում ձևավորված հակակրանքի պատճառով հաղորդման բնույթով պայմանավորված՝ եթերում կարող են կատարել օրենքներով արգելված գործողություններ:~~

~~7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն, կամ որոնք պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:~~

~~8. Արգելվում է Հեռարձակողի, իսկ ոչ գծային տեղեկատվության դեպքում օպերատորի կողմից տեսալսողական ծրագիրը կամ դրա մասը առանց դրանց հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող իրավատերերի համաձայնության տարածելը:~~

1. Արգելվում է տեսալսողական հաղորդումներում՝

1) սահմանադրական կարգը բռնի տապալելու, պատերազմ քարոզելու նպատակ հետապնդող տեղեկատվություն տարածելը.

2) բռնություն և դաժանություն քարոզ պարունակող տեղեկատվություն տարածելը.

3) ազգային, ռասայական, սեռային, կրոնական ատելություն բորբոքելու, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն սերմանելը կամ նման նպատակ հետապնդող տեղեկատվություն տարածելը.

4) պոռնկագրություն տարածելը.

5) քրեորեն պատժելի կամ օրենսդրությամբ արգելված այլ արարքների կոչեր տարածելը:

6) քրեական ենթամշակույթի բարոզ պարունակող ֆիլմերի և տեսալսողական հաղորդումների հեռարձակումը, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Ուղիղ եթերի ժամանակ սույն հոդվածի 1-ին մասով, բացառությամբ 4-րդ կետի, սահմանված արգելքները խախտելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե իրավախախտման մասին ուղիղ եթերում զգուշացվել կամ հայտարարվել է, իսկ կրկնակի կոչի դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:

3. Կարգավորող պետական մարմինը օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման ընթացքում քրեական օրենսգրքով արգելված արարքի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմում է իրավասու մարմիններ:

4. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի բարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն:

5. Արգելվում է օտարերկրյա տեսալսողական ծրագրերում՝ Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին միջամտության բովանդակության տարածելը:

6. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերով և 4-րդ մասով նախատեսված տեսալսողական հաղորդումների նկատմամբ տարածվող չարաշահման արգելքների չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:

7. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին արգելվում է Հեռարձակողների կողմից զվարճալի հաղորդումների և գովազդի հեռարձակումը:

8. Հեռարձակողները կամ օպերատորները սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված տեսալսողական հաղորդումներն առանց ժամային սահմանափակումների կարող են տարածել սպառողների կողմից այդ հաղորդումների հասանելիության արհեստական արգելքի (կոդի) ներդրման տեխնիկական հնարավորության առկայության դեպքում:

9 . Արգելվում է Հեռարձակողի, ոչ գծային տեղեկատվության դեպքում օպերատորի կողմից տեսալսողական ծրագիրը կամ տեսալսողական հաղորդումն առանց դրանց գույքային իրավունքները տիրապետող անձի համաձայնության տարածելը:»:

Հոդված 49. Ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստացած անձի գործունեությունը

1. ~~Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:~~

1. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից տեսալսողական ծրագիրը կարող է վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ Հեռարձակողի կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրի գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության հիման վրա:

1.1 Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից օտարերկրյա տեսալսողական ծրագրի գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության հիման վրա տեսալսողական ծրագիրը կարող է վերահաղորդվել միայն կարգավորող պետական մարմին թղթային կամ էլեկտրոնային ծանուցում ներկայացնելուց հետո:

Կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելու և դադարեցնելու գործընթացի կարգավորումն իրականացվում է սույն Օրենքի 54-րդ հոդվածի դրույթների պահանջներին համապատասխան:

2. Վերահաղորդումը կատարվում է հեռարձակման հետ համաժամանակյա կամ գրեթե համաժամանակյա՝ տեսալսողական տեղեկատվության հեռարձակումից մինչև դրա ընդունումն ընկած կարճաժամկետ ընդհատումներով առաջացող տատանումների հետևանքով՝ հեռարձակման գործընթացին ներհատուկ տեխնիկական պատճառներով պայմանավորված:

3. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը չի կարող լինել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր:

4. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը սեփական տեսալսողական ծրագիր չի կարող արտադրել և հեռարձակել:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

6. Ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձը սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, ինչպես նաև օտարերկրյա տեսալսողական ծրագրերում Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին միջամտության բովանդակության բացառման պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարչական վարույթի հարուցման մասին կարգավորող պետական մարմնի կողմից տեղեկացվելուց հետո 24 ժամվա ընթացքում դադարեցնում է տվյալ տեսալսողական ծրագրի վերահաղորդումը:»:

«7. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջների կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին միջամտության բովանդակության հայտնաբերման առերևույթ խախտման վերաբերյալ վարչական վարույթի հարուցման դեպքում կարգավորող պետական մարմնի պահանջը ստանալուց հետո այն ցանցային օպերատորը, որը տվյալ օտարերկրյա տեսալսողական ծրագրի գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության հիման վրա վերահաղորդում է իրականացնում, 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տեսալսողական ծրագրերի կամ հաղորդումների տեսագրությունները կամ ձայնագրությունները: Կարգավորող պետական մարմնի կողմից պահանջված տեսալսողական ծրագրերի տեսագրությունները կամ ձայնագրությունները կարող են չներկայացվել, եթե առերևույթ խախտման օրվանից անցել է 30 օր:

Հոդված 54. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի գործունեությունը

1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

3. Ծանուցումը ներառում է՝

1) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի վերաբերյալ.

2) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.

3) տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը.

4) տեղեկություններ Հեռարձակողների և օպերատորի հիմնադիր կամ մասնակից հանդիսանալու վերաբերյալ:

4. Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

5. Ծանուցման մեջ թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ լինելու կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում գովազդ ներառված լինելու դեպքում այն չի հաստատվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր չի եղել ձեռք բերել տվյալ տեսալսողական ծրագրի առանց գովազդի տարբերակը:

«6. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների պահանջների կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին միջամտության բովանդակության հայտնաբերման առերևույթ խախտման վերաբերյալ վարչական վարույթի հարուցման դեպքում կարգավորող պետական մարմնի պահանջը ստանալուց հետո, 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տեսալսողական ծրագրերի կամ հաղորդումների տեսագրությունները կամ ձայնագրությունները: Կարգավորող պետական մարմնի կողմից պահանջված տեսագրությունները կամ ձայնագրությունները կարող են չներկայացվել, եթե առերևույթ խախտման օրվանից անցել է 30 օր:»:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում տեսագրությունները և ձայնագրությունները չներկայացնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև օտարերկրյա տեսալսողական ծրագրերում Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին միջամտության բացառման պահանջը խախտելու դեպքում, Կարգավորող պետական մարմինն իրավասու է օրենքով սահմանված կարգով ընդունել որոշում՝ տվյալ տեսալսողական ծրագրի մասով ծանուցման հաստատման մասին ընդունված վարչական ակտի իրավական ուժը դադարեցնելու վերաբերյալ:

Հոդված 57. Տուգանքը

~~1. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտման դեպքում՝ այն հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:~~

~~2. Սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ հաստատուն 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:~~

~~3. Հեռարձակողների և օպերատորի կողմից համապատասխան սփռման տարածքների համընկնման շրջաններում՝ օրինական հիմքով տարածվող այլ տեսալսողական տեղեկատվություն ընդունելու իրավունքը սահմանափակելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ հաստատուն 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:~~

~~4. Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով՝ առանց հայերեն անընդհատ տառադարձության օգտագործելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~5. Հեռարձակողի կողմից հայերեն հաղորդումներն ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս հեռարձակելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով։~~

~~6. Ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով։~~

~~6.1. Օրենքի 14.5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին (ստանդարտներին) չհամապատասխանելու դեպքում համապատասխան անձի կատարած չափումների արդյունքներն օգտագործելն առաջացնում է տուգանքի նշանակում չափումները կատարող անձի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով։ Ընդ որում, եթե համապատասխան չափումներ կատարող անձը չի ներկայացնում իրենից պահանջվող՝ 14.5-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը կամ այլ նյութեր, կամ դրանք ներկայացվում են ոչ պատշաճ (սխալ, թերի, կարգավորող պետական մարմնի սահմանած ժամկետից ուշ կամ վերջինիս սահմանած ձևաչափից տարբերվող ձևով), ապա համարվում է, որ համապատասխան չափումները չեն համապատասխանում Օրենքի 14.5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին (ստանդարտներին)։~~

~~6.2. Օրենքի 14.5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գրավոր հավաստումը չներկայացնելը (այդ թվում՝ երբ ներկայացված հավաստումը չի պարունակում սահմանված բովանդակության որևէ մաս կամ անհրաժեշտ կից փաստաթղթեր) յուրաքանչյուր դեպքում առանձին առաջացնում է տուգանքի նշանակում համապատասխան չափումներ կատարող անձանց, ինչպես նաև այլ անձանց համար, որոնք չափումների արդյունքները կամ այդ արդյունքների հիման վրա մշակված այլ տվյալ փոխանցում կամ որևէ կերպ օգտագործում են երրորդ անձանց հետ հարաբերություններում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով։ Ընդ որում, սույն մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառվում է միայն այն դեպքում, երբ անձը չի ներկայացնում իր հետ անմիջականորեն հարաբերությունների մեջ մտած անձանցից ստացված գրավոր հավաստումները։~~

~~6.3. Օրենքի 14.5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված չափումների մասով կատարված աուդիտի, ստուգումների և այլ ուսումնասիրությունների արդյունքները համապատասխան անձանց չտրամադրելը (այդ թվում՝ սահմանված ժամկետում չտրամադրելը կամ ոչ ամբողջական տրամադրելը) յուրաքանչյուր դեպքում առանձին առաջացնում է տուգանքի նշանակում~~

~~այն տրամադրելու պարտավորություն ունեցող անձանց համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով։~~

~~6.4. Օրենքի 14.5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ծանուցումը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու յուրաքանչյուր դեպքում առանձին առաջացնում է տուգանքի նշանակում այդպիսի ծանուցում կատարելու պարտավորություն ունեցող անձանց համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով։~~

~~7. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն» լուսագրի հաղորդումներ սփռելը, իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ դրա մասին չհիշեցնելը՝~~

~~առաջացնում են տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.05 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։~~

~~8. Հեռարձակողների կողմից թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) խմիչքների և էներգետիկ ըմպելիքների գովազդի հեռարձակումը 06:00-ից մինչև 22:30-ն ընկած ժամանակահատվածում ծխախոտի և ծխախոտային արտադրության գովազդի հեռարձակումը, ինչպես նաև մանկապատանեկան տեսալսողական հաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը՝~~

~~առաջացնում են տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։~~

~~9. Լրատվական հաղորդումների գովազդային ընդհատումը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով։~~

~~10. Հեռարձակողի կողմից ամեն օր եթերում իր ելքային տվյալները չներկայացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~11. Հեռարձակողի կողմից իր հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ իր խորհրդանիշը չհեռարձակելը (բացառությամբ գովազդ հաղորդելու դեպքերի)՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով։~~

~~12. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով։~~

~~13. Արբանյակային հեռարձակման մասին կարգավորող պետական մարմին ծանուցում չներկայացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով։~~

~~14. Սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։~~

~~15. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~16. Հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։~~

~~17. Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները սույն օրենքով սահմանված ժամկետով չպահպանելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով։~~

~~18. Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։~~

~~19. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանները չապահովելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.01 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~20. Սույն օրենքի 8-րդ հոդվածի պահանջները խախտելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։~~

~~21. Արգելված հովանավորություն իրականացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։~~

~~22. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդ և զվարճալի հաղորդումներ հեռարձակելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով։~~

~~23. Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահանջը չպահպանելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~24. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~25. Առանց սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։~~

~~26. Հեռարձակողի, իսկ ոչ գծային տեղեկատվության դեպքում օպերատորի կողմից տեսալսողական ծրագիրը կամ դրա մասը առանց դրա իրավատերերի (հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող) համաձայնության տարածելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~27. Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝~~

~~-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։~~

~~28. Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով։~~

~~29. Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան չգործելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով։~~

~~30. Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները չկիրառելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով։~~

~~31. Սույն հոդվածի 2-30-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:~~

1. Սույն հոդվածով սահմանված իրավախախտումներ կատարած անձի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել իրավախախտում կատարելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող կամ տևող իրավախախտման դեպքում՝ այն հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով գրավոր նախազգուշացում ստացած անձի կողմից նախազգուշացմամբ նշված ժամկետում սահմանված պահանջը չկատարելը կամ նախազգուշացման համար հիմք դարձած նույն խախտումը սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

3. Հեռարձակողների և օպերատորի կողմից համապատասխան սփռման տարածքների համընկնման շրջաններում՝ օրինական հիմքով տարածվող այլ տեսալսողական տեղեկատվություն ընդունելու իրավունքը սահմանափակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4. Հեռարձակողների անվանումները էկրանային ցուցադրման ժամանակ միայն օտար լեզուներով՝ առանց հայերեն անընդհատ տառադարձության օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

5. Հեռարձակողի կողմից հայերեն հաղորդումներն ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս հեռարձակելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

6. Ցանցային օպերատորի կողմից առանց գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության մեկ տեսալսողական ծրագրի վերահաղորդում իրականացնելն՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

7. Ցանցային օպերատորի կողմից առանց գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության երկուսից հինգ տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

8 Ցանցային օպերատորի կողմից առանց գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության վեցից տաս տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով»:

9 Ցանցային օպերատորի կողմից առանց գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության տասից ավելի տեսալսողական ծրագրերի վերահաղորդում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

10. Օրենքի 14.5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին (ստանդարտներին) չհամապատասխանելու դեպքում համապատասխան անձի կատարած չափումների արդյունքներն օգտագործելն առաջացնում է տուգանքի նշանակում չափումները կատարող անձի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով: Ընդ որում, եթե համապատասխան չափումներ կատարող անձը չի ներկայացնում իրենից պահանջվող՝ 14.5-րդ հոդվածի 3-րդ մասում նշված անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը կամ այլ նյութեր, կամ դրանք ներկայացվում են ոչ պատշաճ (սխալ, թերի, կարգավորող պետական մարմնի սահմանած ժամկետից ուշ կամ վերջինիս սահմանած ձևաչափից տարբերվող ձևով), ապա համարվում է, որ համապատասխան չափումները չեն համապատասխանում Օրենքի 14.5-րդ հոդվածի 2-րդ մասում նշված չափանիշներին (ստանդարտներին):

11. Օրենքի 14.5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գրավոր հավաստումը չներկայացնելը (այդ թվում՝ երբ ներկայացված հավաստումը չի պարունակում սահմանված բովանդակության որևէ մաս կամ անհրաժեշտ կից փաստաթղթեր) յուրաքանչյուր դեպքում առանձին առաջացնում է տուգանքի նշանակում համապատասխան չափումներ կատարող անձանց, ինչպես նաև այլ անձանց համար, որոնք չափումների արդյունքները կամ այդ արդյունքների հիման վրա մշակված այլ տվյալ փոխանցում կամ որևէ կերպ օգտագործում են երրորդ անձանց հետ հարաբերություններում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: Ընդ որում, սույն մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառվում է միայն այն դեպքում, երբ անձը չի ներկայացնում իր հետ անմիջականորեն հարաբերությունների մեջ մտած անձանցից ստացված գրավոր հավաստումները:

12. Օրենքի 14.5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված չափումների մասով կատարված աուդիտի, ստուգումների և այլ ուսումնասիրությունների արդյունքները համապատասխան անձանց չտրամադրելը (այդ թվում՝ սահմանված ժամկետում չտրամադրելը կամ ոչ ամբողջական տրամադրելը) յուրաքանչյուր դեպքում առանձին առաջացնում է տուգանքի նշանակում այն տրամադրելու պարտավորություն ունեցող անձանց համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

13. Օրենքի 14.5-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ծանուցումը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու յուրաքանչյուր դեպքում առանձին առաջացնում է տուգանքի նշանակում այդպիսի ծանուցում կատարելու պարտավորություն ունեցող անձանց համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

14. Ընտրությունների (հանրաքվեների) նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում առանց էկրանի վրա պարտադիր անընդմեջ «Նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն» լուսագրի հաղորդումներ սփռելը, իսկ լսողական հաղորդումների դեպքում յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ դրա մասին չհիշեցնելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

15. Հեռարձակողների կողմից թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) խմիչքների և էներգետիկ ըմպելիքների գովազդի հեռարձակումը 06:00-ից մինչև 22:30-ն ընկած ժամանակահատվածում ծխախոտի և ծխախոտային արտադրության գովազդի հեռարձակումը, ինչպես նաև մանկապատանեկան տեսալսողական հաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

16. Լրատվական հաղորդումների գովազդային ընդհատումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

17. Հեռարձակողի կողմից ամեն օր եթերում իր ելքային տվյալները չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

18. Հեռարձակողի կողմից իր հաղորդումների հեռարձակման ժամանակ անընդմեջ իր խորհրդանիշը չհեռարձակելը (բացառությամբ գովազդ հաղորդելու դեպքերի)՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

19. Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, քրեական ենթամշակույթի քարոզ պարունակող ֆիլմերն ու տեսալսողական հաղորդումները, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

20. Կարգավորող պետական մարմնի կողմից տեղեկացվելուց հետո 24 ժամվա ընթացքում ցանցային օպերատորի կողմից սույն Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև օտարերկրյա տեսալսողական ծրագրերում Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին միջամտության բացառման պահանջի առերևույթ խախտմամբ տեսալսողական ծրագրի վերահաղորդումը չդադարեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

21. Հեռարձակողի կողմից սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-ից 5-րդ կետերի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

22. Արբանյակային հեռարձակման մասին կարգավորող պետական մարմին ծանուցում չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

23. Սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

24. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

25. Հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

26. Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները սույն օրենքով սահմանված ժամկետով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

27. Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

28. Սույն օրենքի 42-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված պայմանները չապահովելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

29. Սույն օրենքի 8-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

30. Արգելված հովանավորություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

31. Պետության հայտարարած սգո և հիշատակի օրերին գովազդ և զվարճալի հաղորդումներ հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

32. Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

33. Ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

34. Առանց սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

35 . Առանց սույն օրենքի 49-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

36. Հեռարձակողի, ոչ գծային տեղեկատվության դեպքում օպերատորի կողմից տեսալսողական ծրագիրը կամ տեսալսողական հաղորդումն առանց դրանց գույքային իրավունքները տիրապետող անձի համաձայնության տարածելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

37. Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

38. Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

39. Հեռարձակողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրին համապատասխան չգործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

40. Էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները չկիրառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

41. Սույն հոդվածի 2-40-րդ մասերով սահմանված հիմքերով վարչական տույժի ենթարկված անձի կողմից մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված տույժի եռապատիկի չափով:

Հոդված 58. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցումն ու դադարեցումը

1. Հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝

1) Հեռարձակողը սույն օրենքի 57-րդ հոդվածի ~~31~~41-րդ մասով սահմանված հիմքով մեկ տարվա ընթացքում երեք անգամ ենթարկվել է վարչական տույժի (բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի), որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

2) Հեռարձակողը, սույն օրենքի 57-րդ հոդվածի ~~31~~41-րդ մասով սահմանված հիմքով սույն օրենքի 57-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, մեկ տարվա ընթացքում մեկ անգամ ենթարկվել է վարչական տույժի, որից հետո նույն տարվա ընթացքում կատարել է սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որևէ վարչական տույժի նշանակման համար հիմք համարվող արարք.

3) Հեռարձակողի կամ օպերատորի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետևանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը, տեխնիկական խոչընդոտներ են ստեղծվում այլ Հեռարձակողների և օպերատորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրինական գործող ռադիոհաճախականություններ օգտագործող այլ սուբյեկտների գործունեության համար, չի ապահովվում տեսալսողական հաղորդումների տեխնիկական որակը.

4) լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում.

5) լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ.

6) այդ մասին կա Հեռարձակողի դիմումը.

7) խախտվել են օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները.

8) ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ վարչապետին կամ արտակարգ դրության ընթացքում ի պաշտոնե արտակարգ դրության տարածքի պարետ հանդիսացող փոխվարչապետին պաշտոնական հաղորդագրություն կատարելու համար եթերաժամանակ չի հատկացվե.

9) Հեռարձակողի տեսալսողական ծրագրի անվանումը չի համապատասխանում սույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին:

2. Հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո կարգավորող պետական մարմնի նշած ժամկետում սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումները վերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը վերացնում է կասեցումը:

Կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:

3. Հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1) իրավաբանական անձը լուծարվել է.

2) տեղի է ունեցել լիցենզիայի փոխանցում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց.

3) լիցենզավորման կամ հեղինակազորման համար ներկայացված փաստաթղթերում էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն է հայտնաբերվել.

4) սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտումը չի վերացվել.

5) այդ մասին դիմում է ներկայացվել.

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել սույն օրենքի 46-րդ հոդվածի 9.1-ին մասով մրցույթում հաղթող ճանաչելու և լիցենզիան տրամադրելու որոշումը.

6.1) կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական ծրագրի կամ տեսալսողական հաղորդման գործողության կասեցված լինելու պայմաններում Հեռարձակողն իրականացրել է տեսալսողական հաղորդումների հեռարձակում.

7) օրենքով սահմանվել են լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր:

4. Տեսալսողական հաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը չապահովելու համար անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝

1) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով.

2) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ անձը տեղյակ է պահել կարգավորող պետական մարմնին և ստացել թույլտվություն.

3) անհաղթահարելի ուժի հետևանքով:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում Հեռարձակողները ողջամիտ ժամկետում վերականգնում են տեսալսողական հաղորդումների հեռարձակումը:

~~6. Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև ցանցային օպերատորների վրա այնքանով, որքանով կիրառելի են:~~

7. Եթե հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին կարգավորող պետական մարմնի որոշումը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է անվավեր, ապա այդ որոշման անվավեր ճանաչվելու պահին հանրային մուլտիպլեքսի սլոթ օգտագործող Հեռարձակողն իր դիմումի հիման վրա նույն պայմաններով շարունակում է իրականացնել հեռարձակում մինչև օրենքով սահմանված կարգով սլոթի համար նոր մրցույթի արդյունքների ամփոփումը և լիցենզիայի տրամադրումը կամ դրա հիմնավոր մերժումը:

Հոդված 58.1. «Ցանցային օպերատորի լիցենզիայի գործողության կասեցումը ու դադարեցումը

1.Ցանցային օպերատորի լիցենզիայի գործողությունը կասեցվում է՝ առավելագույնը 30 օր ժամկետով, եթե՝

1) Ցանցային օպերատորը սույն օրենքի 57-րդ հոդվածի 41-րդ մասով սահմանված հիմքով մեկ տարվա ընթացքում երեք անգամ ենթարկվել է վարչական տույժի.

2) Ցանցային օպերատորի տեխնիկական միջոցները չեն համապատասխանում ընդունված ստանդարտներին, որի հետևանքով վտանգ է սպառնում մարդկանց առողջությանը կամ արգելքներ են ստեղծվում այլ Հեռարձակողների կամ օպերատորների գործունեության համար.

3) Ցանցային օպերատորի կողմից առանց որևէ հիմնավոր պատճառի 72 ժամ շարունակ վերահաղորդում չի իրականացվել.

4) Ցանցային օպերատորը լիցենզիա ստանալու պահից վեց ամսվա ընթացքում վերահաղորդում չի իրականացնում.

5) այդ մասին կա ցանցային օպերատորի համապատասխան դիմումը.

2. Լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո կարգավորող պետական մարմնի նշած ժամկետում սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումները վերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը վերացնում է կասեցումը:

3. Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե՝

1)իրավաբանական անձը լուծարվել է կամ ֆիզիկական անձի գործունեությունը դադարեցվել.

2) տեղի է ունեցել լիցենզիայի փոխանցում ֆիզիկական կամ իրավաբանական այլ անձանց.

3) լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերում էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություն է հայտնաբերվել.

4) սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը չի վերացվել.

5) այդ մասին կա ցանցային օպերատորի համապատասխան դիմումը.

6) կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական ծրագրի կամ տեսալսողական հաղորդման գործողության կասեցված լինելու պայմաններում ցանցային օպերատորն իրականացրել է տեսալսողական հաղորդումների վերահաղորդում.

7) օրենքով սահմանվել են լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր:

Հոդված 60. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռարձակողները և օպերատորները շարունակում են իրենց գործունեությունը լիցենզիայի ժամկետներին համապատասխան:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին նոր լիցենզիա ստացած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքի իմաստով համարվում են հեղինակազորված և լիցենզիա ստացած Հեռարձակողներ:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին լիցենզավորման հայտ ներկայացրած հեռուստառադիոընկերությունները սույն օրենքի իմաստով համարվում են հեղինակազորված:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, սեփական տեսալսողական հաղորդում հեռարձակող մալուխային հեռուստառադիոընկերությունները դադարեցնում են սեփական հաղորդման հեռարձակումը:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մալուխային հեռուստառադիոընկերությունները համարվում են ցանցային օպերատորներ և շարունակում են իրենց գործունեությունը լիցենզիայի ժամկետով:

8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կարգավորող պետական մարմնի նախագահը, անդամները, Խորհրդի նախագահը և անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների ավարտը:

10. Սույն օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված չափորոշիչները և հասկացությունները կարգավորող պետական մարմինը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

11. Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության վերաբերյալ գործունեությունը թույլատրող որոշում ստանալու համար հայտերը ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո:

12. Մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը կարգավորող պետական մարմինը հաստատում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

13. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին լիցենզավորման հայտ ներկայացրած Հեռարձակողները լիցենզիան ստանում են սույն օրենքով սահմանված կարգով և պայմաններին համապատասխան:

14. Լսողական ծրագիր հեռարձակողների համար անալոգային հաճախականությունների վրա տարածվում են սույն օրենքով սլոթի վերաբերյալ նախատեսված կարգավորումները:

15. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, սույն օրենքով նախատեսված տուգանքները կիրառվում են 50 տոկոսի չափով:

16. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, սույն օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներով արգելված արարքներ կատարելու համար կիրառվում է գրավոր նախազգուշացում:

17. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ձևավորած մրցութային հանձնաժողովի կազմը լուծարվում է:

18. Թվային ռադիոհեռարձակման անցնելիս լիցենզիա ստացած լսողական ծրագիր հեռարձակողները պարտավոր են իրենց տեխնիկական միջոցները համապատասխանեցնել թվային հեռարձակման ցանցով հեռարձակվելու համար նախատեսված միջոցներին:

19. Սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասը չի տարածվում սույն օրենքը ուժի մեջ մտնելու պահին առկա պայմանագրային հարաբերությունների վրա մինչև պայմանագրերի գործողության ժամկետի ավարտը:

20. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը կինեմատոգրաֆիական ստեղծագործությունների ցուցադրության դեպքում գործում է մեկ տարի հետո:

21. Սույն օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

22. 2020 թվականին հայտարարվելիք լիցենզիաների գործողության ժամկետը լրանալու հիմքով սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների հետ միաժամանակ հայտարարվում են նաև բոլոր ազատ սլոթների օգտագործման լիցենզավորման մրցույթները:

23. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիայի մրցույթը հայտարարված լինելու, բայց հայտերի քվեարկությունը կայացած չլինելու դեպքում այն չեղարկվում է, և մրցույթ է հայտարարվում սույն օրենքով սահմանված կարգով: Չեղարկված մրցույթի մասնակցության համար վճարված պետական տուրքը համարվում է վավեր Հեռարձակողի կողմից նոր մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվելու դեպքում: Նոր մրցույթին մասնակցելու համար Հեռարձակողի կողմից հայտ չներկայացվելու դեպքում վճարված պետական տուրքը վերադարձվում է ամբողջությամբ.

24. Սույն օրենքի 14.5-րդ հոդվածը և 57-րդ հոդվածի ~~6.1-6.4~~10-13-րդ մասերը գործում են մինչև Կոմիտեի ընտրած առևտրային կազմակերպության գործունեությունը, բայց ոչ ուշ, քան մինչև 2025 թվականի հունվարի 1-ը: